

---

Պ.Յ. ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՌՑԻ ԵՎ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ**

Հայ ժողովրդի պատմության որևէ հիմնահարցի մասին այնքան չի գրվել, որքան Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Այդ հարցերը վաղուց դարձել են ուսումնասիրողների ուշադրության առարկան: Մտեղծվել է բազմաբնույթ ու բազմալեզու հարուստ գրականություն: Առանց չափազանցության, կարելի է ասել, որ միայն մենագրությունների թիվը մոտենում է 5000 միավորի սահմաններին: Անտարակույս, հիմնահարցերի գիտական մշակման ուղղությամբ մեծ արդյունքների է հասել նախ և առաջ հայ պատմագիտական ու հրապարակախոսական միտքը: XIX դարի 70-ական թվականներից սկսած, առ այսօր հրապարակվել են հազարավոր մենագրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, ակամատեսների վկայություններ, հուշեր, ակնարկներ և այլն:

Միաժամանակ լայն ծավալի աշխատանք են կատարվել նաև ռուսական, արևմտաեվրոպական, թուրքական, պարսկական, արաբական և այլ լեզուներով: Հայոց ցեղասպանության պատմության հմուտ ուսումնասիրողներից մեկի՝ Ռ.Գ.Սահակյանի հաշվարկներով, 1900-1960-ական թվականներին միայն Ֆրանսիայում լույս է տեսել շուրջ 400 ամուն գիրք՝ նվիրված հայ ազատագրական շարժումներին, հայկական ջարդերին և, վերջապես՝ 1915թ. ահավոր ռճիռին: Կարծում ենք, պատկերը

նույնն է նաև անգլերեն, թուրքերեն և մասամբ նաև՝ գերմաներեն հրատարակությունների ղեկավարում: Հատկանշանական է որ «Հայերի գեո-ցիոլոգիալ Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի և նյութերի ստվարածավալ ժողովածուի<sup>2</sup> նվիրված իր գրախոսականում չեխ պատմաբան Ջ.Վեսելա-Պրենոսիլովան մատնանշում է 20-30-ական թթ. Չեխիայում լույս տեսած բազմաթիվ գրքեր, որոնք տեղ չեն գտել սույն ժողովածուի վերջին մասում գետնադրված մատենագիտության ցանկում<sup>3</sup>: Հասկանալիորեն, պետք է նկատի ունենալ նաև լեհերեն, բուլղարերեն, սերբերեն, հունարեն, իսպաներեն և այլ լեզուներով լույս տեսած գրականության առկայության իրողությունը:

Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը նվիրված բազմալեզու գրականության մեջ առանձնանում են հատկապես ռուսերեն հրատարակությունները: Բնական է, որ ռուսական պատմագիտական միտքը, քաղաքական հրապարակախոսությունն ու հասարակական կարծիքն առաջիններից մեկն անդրադարձավ մեկ հետաքրքրող հիմնահարցերին: Դեռևս XIX դարի 70-ական թվականներից, ընթերցող հասարակության ուշադրության են ներկայացվում Հայկական հարցին նվիրված չափազանց հետաքրքիր ու ծանրակշիռ ուսումնասիրություններ, իսկ նույն դարի վերջերին, Օսմանյան կայսրությունում սկիզբ առած հայկական ջարդերի կապակցությամբ, լույս են տեսնում մի շարք արժեքավոր ժողովածուներ և մեծագրություններ: Ռուսական կայսրության պաշտոնական և ոչ պաշտոնական մամուլի օրգաններում, գավառական և նահանգային թերթերում ու ամսագրերում, մինչև 1917թ., նշված խնդիրների վերաբերյալ տպագրվում են հիմնականում պատմականության դիրքերից գրված մեծ թվով արժեքավոր հոդվածներ ու հրապարակումներ: Դժվար է մատնացույց անել Ռուսաստանյան կայսրությունում XIX դարի 70-ական թվականներից մինչև 1917 թվականը լույս տեսած որևէ ամսագիր կամ լրագիր<sup>4</sup>, որն անդրադարձած չլիներ հայ ժողովրդի նկատմամբ թուրքական պետականության որդեգրած պանիսլամական և պանթուրքական ոճրագործ քաղաքականության մանրամասներին և

չդատապարտեր դրանք: Այդ նյութերը մեզ են ներկայացնում ոչ միայն Ռուսաստանի պետական քաղաքականության դրսևորումները, այլ նաև՝ նշանավոր քաղաքագետների, պետական ու հասարակական գործիչների, մշակույթի ներկայացուցիչների վերաբերմունքը, կարծիքը: Ռուսական բազմաթիվ հրապարակումների շնորհիվ բացահայտվել են Հայկական հարցի և ցեղասպանության սպիտակ շատ էջեր, շրջանառության մեջ են դրվել մեծ թվով արխիվային եզակի փաստաթղթեր: Պարբերաբար և հետևողականորեն՝ Հայկական հարցի և ցեղասպանության հիմնախնդիրներին անդրադարձել են «Голос Москвы», «День», «Исторический вестник», «Летопись», «Московская газета», «Новое время», «Правительственный вестник», «Речь», «Русская мысль», «Русское богатство», «Русское слово», «Санкт-Петербургские ведомости», («Петроградские ведомости»), «Эхо» և մամուլի ուրիշ շատ օրգաններ:

Իսկ տեղական՝ նահանգային, գավառային և քաղաքային մամուլը, ինչպիսիք են օրինակ՝ «Астраханский листок», «Баку», «Жизнь Кавказа», «Закавказская речь», «Кавказское слово», «Одесский листок», «Отклики Кавказа», «Приазовский край», «Тифлиссский листок», «Южные ведомости», «Южный край» և ուրիշներ, ուղղակի ուղղված էին այդ հարցերին վերաբերող հոդվածներով ու հրապարակումներով: Մատենագետ Մանուշակ Բողղանյանի հաշվարկներով՝ միայն XIX դարի ռուսական մամուլում հայերին և Հայաստանին վերաբերող տպագրված հոդվածները գերազանցում են 2500 միավորը, որոնց մեծ մասը, անկասկած, նվիրված էին մեզ հետաքրքրող հիմնախնդիրներին<sup>1</sup>: Կարելի է ենթադրել, որ 1900-1918 թվականների ընթացքում ռուսական մամուլի նույնաբնույթ հրապարակումների թիվն, անշուշտ, բառապատկվել է: Մանավանդ, եթե նկատի ունենանք հայ ժողովրդի համար բախտորոշ 1915 թվականը, և դրան հետևող իրադարձությունները, որոնք լայն քննարկման առարկա դարձան համաշխարհա-

1 Բ. Գ. Սահակյան, *Ցեղասպանության պատմությունից*, Երևան, 1990, էջ 223:

2 Պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1966:

3 Տե՛ս «Archiv Orientalni». Praha, 1970, N4, p. 497-498.

4 *Նախահեղափոխական շրջանի ռուսական թերթերի լիակարգի ցանկը* րե՛ս Азфавитный служебный каталог русских дореволюционных газет (1703-1916), Ленинград, 1958.

1 Մ. Բ. Բողղանյանը, *Նշանավոր հայագիր Կ. Էզովի գիրական ղեկավարության ներքո, ժամանակին հրատարակության էր պատրաստել XIX դարի ռուսական 248 անուն թերթերում և ամսագրերում տպագրված հայերին և Հայաստանին վերաբերող հոդվածների մատենագիտական մի ցանկ (2586 միավոր): Ցավոք, չափազանց արժեքավոր այդ աշխատանքի հետագա նակարագիրն անհայտ է (Մ. Բողղանյանի կազմած մատենագիտական ցանկի մասին րե՛ս Известия Императорской Академии наук, СПб., 1916, հիմքով «Армянский вестник», М., 1916, N22, с.17):*

կությունները՝ «Պատմա-բանասիրական հանդես», հասարակական գիտությունների «Լրաբեր», ինչպես նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», «Բանբեր Երևանի համալսարանի», «Երևանի համալսարան» (լրատու), «Գարուն», «Литературная Армения» ամսագրերը, «Коммунист», «Голос Армении», «Республика Армения» և այլ թերթեր: Նման վիճակը բնավ էլ պատահական չէր: Մինչդեռ, խորհրդային իշխանության տարիներին, Մոսկվայում և ԽՍՀՄ մյուս կենտրոններում տվյալ հիմնահարցերի վերաբերյալ որդեգրվել էր բացահայտ անտարբեր վերաբերմունք, Հայաստանում կատարվող աշխատանքների մի զգալի մասը, գիտակցաբար, հրատարակվում էր ռուսերենով, որպեսզի ոչ միայն բավարարվեին ռուս և ռուսալեզու ընթերցողների հետաքրքրասիրությունները տվյալ հարցերի նկատմամբ, այլև ապահովվեին լույս տեսած փաստաթղթերի, որքան կարելի է լայն՝ միութենական և միջազգային գիտական շրջանառությունը:

Այսպիսով, ակներև է կատարված ու կատարվող լայնածավալ աշխատանքը: Մակայն, անբավարար է Հայկական հարցի և հայերի ցեղասպանության մատենագիտությունների ստեղծման ընթացքը: Հայտնի է, որ յուրաքանչյուր մատենագիտական աշխատանք յուրօրինակ ուղեցույց է գիտական ռուսամասիրությունների համար, որևէ գիտահետազոտական աշխատանք սկսելու պարտադիր նախապայման: Հայտնի է նաև, որ առանց կատարված աշխատանքների՝ թեկուզև համառոտ կամ մասնակի մատենագիտությունների, հնարավոր չէ գիտաքննական որևէ ռուսամասիրության ստեղծումը:

Հայկական հարցի և հայերի ցեղասպանության վերաբերյալ եվրոպական լեզուներով լույս տեսած երկասիրությունների մատենագիտություն կազմելու առաջին փորձերից մեկը պատկանում է Փարիզի Նուբարյան պահոցի մատենադարանապետ Ա. Մալմասյանին: Դեռևս 1946 թվականին հրատարակած<sup>1</sup> և 1969թ. վերահրատարակած<sup>2</sup> «Հայկական մատենագիտություն» արժեքավոր աշխատությունում նա ա-

1 A.Salmasian, *Bibliographie de L'Arménie*. Paris. 1946. 196թ.

2 A.Salmasian, *Bibliographie de L'Arménie*, Nouvelle édition entièrement revue et considérablement augmentée. Erevan. 1969. 469թ. Սույն մատենագիրության այդ թվում և մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ արժեքների և վրիպումների մասին տե՛ս Հ.Անասյանի գրախոսականը (Հ.Անասյան, Հայաստանյան մատենագիտությունը. «Պատմա-բանասիրական հանդես». 1971. N1. էջ 239-254):

ռանձին բաժիններով ներկայացրել է մեզ հետաքրքրող հիմնահարցերի վերաբերող գրականության ցանկերը<sup>3</sup>:

Հայերեն և օտար լեզուներով, այդ թվում և ռուսերենով, հրատարակված Հայկական հարցին և հայերի ցեղասպանությանը վերաբերող մի ամփոփ մատենագիտություն են հրատարակել Ն. Դերոյանը, Ա. Նազիկյանն ու Ռ. Սահակյանը, որը գետեղված է «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի վերջում: Մատենագիտությունը պարունակում է՝ 180 հայերեն, 55 ռուսերեն և 206 արևմտաեվրոպական լեզուներով գրքերի, ուսումնասիրությունների և հոդվածների մի ցանկ<sup>4</sup>: Սույն մատենագիտությունը ճշգրտվել և համալրվել է ժողովածուի երկրորդ հրատարակության ժամանակ (հայերեն՝ 435, ռուսերեն՝ 100, արևմտաեվրոպական լեզուներով՝ 335 միավոր)<sup>5</sup>:

70-ական թվականների սկզբներին Հայկական հարցի և Հայկական Տասնհինգի մատենագիտության ստեղծման երկու անհաջող փորձ է կատարվում Բեյրութում: Առաջինը Հայկական Լրատվական կենտրոնի պատրաստած, մեքենագիր 396 էջ ընդգրկող՝ «Հայկական հարցի մատենագիտություն» էր, մյուսը՝ Հայկական ցեղասպանության վաթսուհինյակի նշումի Լիբանանի ազգային կենտրոնական վարչության կողմից առանձնացված Խմբագրական մարմնի պատրաստածը: Վերջին աշխատանքը, որ կատարել էին Լևոն Վարդանը, Հ. Թերճյանյանը և Ռ. Հովհաննիսյանը, անգամ լույս տեսավ 3000 տպաքանակով<sup>6</sup>: Մա-

1 Տե՛ս աշխարհային վերջին հրատարակության IV (Պատմություն). IX (Տարագրություններ, հալածանքներ, վարագրություններ) և X (Հայկական Սիդուր) բաժինները:

2 *Геноцид армян в Османской империи*, Ереван, 1966, с. 523-540. Նշելի է որ այս ցանկը գիրքից է նաև Յո. Լիխտիուսի (տե՛ս Y.Lepsius, *Rapport secret sur les massacres de L'Arménie*. Beyrouth. 1968. p. 351-358), Ա.Մանդելշտամի (տե՛ս A.Mandelstam, *La société des Nations et les Puissances devant le problème Arménien*, Beyrouth, 1970, p. 505-514), Հակոբ Բարբիի (տե՛ս H.Barby, *Au Paus de L'épouvante: L'Arménie martyre*. Beyrouth. 1973. p. III-XIII) թիյրության հրատարակությունների. այնպես էլ «An Anthology of Historical writings on the Armenian massacres of 1915» (Beirut. 1975. p.219-229) ժողովածուի հավելվածներում: Բաղված է միայն արևմտաեվրոպական լեզուներով գրականությունը:

3 Erevan, 1982, с.618-653. Տարակուսելի է ժողովածուի հայերեն հրատարակությունում (Երևան, 1991) մատենագիտական սույն ցանկի բացակայությունը:

կայն, ինչ-ինչ հանգամանքների բերումով, ամբողջ տպաբանակը ոչնչացվեց<sup>2</sup>:

70-ական թվականների կեսերին դարձյալ Մփյուռքում, լույս են տեսնում մի շարք մատենագիտական ցանկեր, որոնց հեղինակներն էին Վրեժ Ներսեսյանը, Բրուք Սինասյան-Հոփլամազյանը, Աննա Ավագյանը և ուրիշներ<sup>3</sup>: Նշված աշխատանքները հեռու էին ամբողջական, թեկուզև մտավոր սպառիչ ցանկեր լինելուց, սակայն սնծապես օգտակար դարձան հետագա աշխատանքների ընթացքում:

Նկատի ունենք Լևոն Վարդանի<sup>4</sup> և Տիգրան Գևորգյանի<sup>5</sup> կազմած մատենագիտական ցանկերը: Հատկապես դրվատանքի է արժանի Տ. Գևորգյանի աշխատանքը, որը, թեև հեղինակն անվանում է «անկատար մախավոր», սակայն լավագույններից մեկն է, որ լույս է տեսել այս բնագավառում: Ցավոք, այն ամենատեղի մնացել ուսումնասիրողների տեսադաշտից:

Առավել հաջողված պետք է համարել Ռիչարդ Հովհաննիսյանի կատարած աշխատանքը, որը միմիայն Հայկական ցեղասպանության (1915-1923թթ.) պատմությանը վերաբերող մատենագիտություն է<sup>6</sup>: Այն

կազմված է պոֆեսիոնալ բարձր մակարդակով և գիտական մատենագիտության դասական օրինակ կարող է ծառայել: Աշխատանքը բաղկացած է երկու մասից: Առաջինը արխիվային նյութերի (անգլիական, ամերիկյան, ֆրանսիական, հայկական և այլն) ցանկ է, իսկ երկրորդը՝ մատենագիտություն է, բաղկացած 460 միավոր, կիսնականում սենագրական, ուսումնասիրություններից (գերազանցապես անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և թուրքերեն): Նշելի են նաև Գևորգ Պաղյանի կազմած զույգ մատենագիտական ցանկերը, որոնք, թեև զուտ Հայկական հարցին և հայերի ցեղասպանությանը չեն վերաբերում, սակայն առանձին բաժիններ ունեն այդ հիմնահարցերի վերաբերյալ: Այս ցանկերից առաջինը, որը հեղինակը անվանել է «Ընտրովի մատենագիտություն»<sup>1</sup>, ընդգրկում է 143 անուն գործ (ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն, իտալերեն): Իսկ մատենագիտական երկրորդ ցանկն ընդգրկում է 170 անուն գործ (հայերեն, ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն, գերմաներեն, իտալերեն)<sup>2</sup>: Սույն մատենագիտությունների առանձնահատկությունը մախորդներից կայանում է նրանում, որ այստեղ բերվում են նաև թուրք հեղինակների համապատասխան աշխատությունները (առաջինում 8 միավոր, իսկ երկրորդում՝ 41):

Այս տարիներին լույս տեսած միակ աշխատանքը, որն ամբողջությամբ վերաբերում է ռուսերեն՝ համապատասխան գրականության մատենագիտությանը, պատկանում է հայկական մատենագիտության մեծ երախտավոր Հակոբ Անասյանին: Աշխատանքը կատարվել է դեռևս 1973-1975 թվականների ընթացքում՝ ակադեմիայի հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտորի հանձնարարությամբ: Մակայն, ինչ-ինչ պատճառներով, տպագրության պատրաստ մատենագիտությունն այդպես էլ երևանում լույս չտեսավ: Իսկ մի քանի տարի անց, հեղինակն այն հրատարակեց ԱՄՆ-ում<sup>3</sup>: Գիրքը 1877-1971 թվականների ընթացքում լույս տեսած ռուսերեն 662 միավոր աշխատությունների մատենագիտական ցանկն է: Նախ, արվում է ռուսերեն մա-

1 1915-1922: Archival Sources and Bibliography of Books on the Turkish Genocide of Armenians, Beirut, 1975, 43p. Մատենագիտությունը բաղկացած է երկու 512 միավոր հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, ռուսերեն լեհերեն, իսրայելերեն, դանիերեն, հոլանդերեն, հունգարերեն, ռուսերեն, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն, հունարեն ուսումնասիրություններից և արխիվային նյութերից:

2 Այս հրատարակությունների հսկայականների մասին մանրամասն տե՛ս Լևոն Վարդան Հայկական Տասնհինգ թուրքական մատենագիտության մեջ՝ «Հայկական հայագիտական հանդես», Բեյրութ, 1995, հայ. ժ. էջ 309-312: Ավելի ընդարձակ տե՛ս Նույնի՝ «Հայկական Տասնհինգ թուրք մատենագիտության և մանուկի մեջ և մեկը», Բեյրութ, 1998, մեկագրությունում:

3 Այդ աշխատանքների մասին մանրամասն տե՛ս Հրանդ-Սամուել Մատենագիտական հրատարակություններ: Մատենագիտություն հայկական ջարդերու՝ «Յառաջ», օրաթերթ, Փարիզ, 1974, 4-5 մարտի:

4 Լևոն Վարդան. Ժամանակագրություն Հայկական Տասնհինգի (1915-1923). Բեյրութ, 1975, էջ 276-292 (հայերեն 170 և օտար լեզուներով 120 միավորներ):

5 Տ. Գևորգյան. Համառոտ մատենագիտություն Մեծ Եղեռնի մասին (Օրար հեղինակներ). տե՛ս Ա. Յափուճյան. Մեծ Եղեռնը օրար միավորակության գնահատումով, Կահիրե, 1980, էջ 138-167 (243 միավոր):

6 R.G. Hovhannesian. The Armenian Holocaust: A Bibliography Relating to the Deportations, Massacres and Dispersion of the Armenian people. 1915-1923. Cambridge, Mass.: Armenian Heritage, 1978, 43p. Տե՛ս նաև երկրորդ հրատարակությունը՝ Cambridge: Armenian Heritage Press, 2 nd revised printing, 1980, 43p.

1 K.K. Baghdjian. La 'Probleme Arme nian, Montre' al, 1985, p.267-283.

2 K.K. Baghdjian, La Confiscation, par le gouvernement turc, des biens armeniens, Montre' al, 1987, p.231-238.

3 H.S. Anassian, The Aemenian Question and the Genocide of ehe Armenians in Turkey (A brief Bibliography of russian materials). Los Angeles: American Armenian International College, 1977, 177p. Տե՛ս նաև սույն գրքի երկրորդ հրատարակությունը՝ Los Angeles: American Armenian International College: Abril Printing, Co., 1983, 177p.

տենագիտությունը (էջ 1-83), ապա դրա լրիվ անգլերեն թարգմանությունը (էջ 87-177): Հեղինակը խոստովանում է, որ իր կատարած աշխատանքը միտում չունի սպառնալի լինելու և դա է պատճառը, որ իր գործը խորագրել է որպես «Համառոտ մատենագիտություն»: Աշխատանքում տեղ գտած որոշ անճշտություններ և վրիպակներ, կարծում ենք, հետևանք են այն բանի, որ հեղինակը հնարավորություն չի ունեցել վերջնականապես ճշգրտելու իր կազմած ցանկը և անձամբ ստուգելու բնագրերը:

Անշուշտ, Հ.Անասյանը հիանալի էր գիտակցում, որ իր կազմած մատենագիտությունը չէր կարող ընդգրկել ռուսերենով գոյություն ունեցող բովանդակ նյութը, մասնավորապես՝ նախախորհրդային ռուսական մամուլի հրատարակումները: Հետևաբար, հույս էր հայտնում, թե մասնագետները երբևիցե լրացնելու են իր կազմած ցանկը<sup>1</sup>:

Վերջին տարիներին լույս տեսած մատենագիտական աշխատություններից, հատկապես, առանձնանում է Տիգրան Գևորգյանի աշխատասիրած «Հայկական հարցը և Հայկական կոտորածները: Համապարփակ մատենագիտության փորձ» ուշագրավ գիրքը<sup>2</sup>: Սա ընդարձակածավալ և բավականին խնամքով կազմված մատենագիտություն է: Այն բաղկացած է հետևյալ բաժիններից՝ «Մատենագիտական փորձ Հայկական հարցի և Հայկական կոտորածներու մասին» (հայկական նյութեր՝ 1332 միավոր), արևմտաեվրոպական նյութեր(1132 միավոր) և Հ.Անասյանի կազմած, վերը հիշատակված ռուսերենով լույս տեսած նյութերի ցանկը (662 միավոր): Ինչպես համեստորեն խոստովանում է աշխատասիրողը, իր կազմած մատենագիտությունը «ապագայում կատարվելիք մեծ աշխատանքի մը նախաքայլը կարելի է համարել միայն»<sup>3</sup>: Իրոք, մատենագիտական յուրաքանչյուր նոր աշխատանք, կամա, թե ակամա, հենվում է նախկինում կատարված աշխատանքների վրա, ինքն էլ իր հերթին հիմք ծառայելով ապագա երկասիրությունների համար:

Հայկական հարցի պատմությանը վերաբերող, ռուսերեն լույս տեսած գրականության մատենագիտության կազմման ուղղությամբ մեծ և շնորհակալ աշխատանք է կատարել Արման Կիրակոսյանը: Նրա գրչին են

1 Անդ. Առաջաբան:

2 Հրապ. ՀԲԸ Միության Արև Մանուկյան մշակութային հիմնադրամի, Կախիր, 1995, 300 էջ:

3 Անդ. էջ 22

պատկանում Հայկական հարցին նվիրված բազմաթիվ ծանրակշիռ հոդվածներ, չափազանց արժեքավոր մենագրություններ և մի շարք գրախոսություններ: Չուրընթաց անդրադարձել է նաև խնդրո առարկա հիմնահարցի մատենագիտությանը, որին նվիրել է մի քանի հոդվածներ<sup>1</sup> և կազմել առանձին մատենագիտական ցանկեր: Անցած տարիների ընթացքում Ա. Կիրակոսյանը հրատարակել է այդպիսի մի քանի մատենագիտություններ: Նշելի է հատկապես «Հայկական հարցի (1890-1900) գրականության մատենագիտություն» ցանկը:

Այստեղ բերված են նշված տարիներին լույս տեսած ուսումնասիրությունները (ընդգրկում է 190 անուն հոդված, բրոշյուր, մենագրություն, փաստաթղթերի ժողովածու և այլն)<sup>2</sup>: Մի քանի տարի անց՝ Մոսկվայում, Ա. Կիրակոսյանը հրատարակել է մի այլ ցանկ, որտեղ տվել է 1975-1985 թվականների ընթացքում ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն և թուրքերեն լույս տեսած գրքերի և ուսումնասիրությունների մի ոչ ամբողջական մատենագիտություն<sup>3</sup>: Առավել ամբողջական է հեղինակի կազմած մատենագիտական հաջորդ ցանկը, որտեղ ներկայացված են 1978 թվականից 1983 թվականը Ռուսաստանում և Խորհրդային Միությունում Հայկական հարցին և հայերի ցեղասպանությանը վերաբերող ռուսերենով լույս տեսած աշխատությունները<sup>4</sup>: Սույն մատենագիտական ցանկը բաղկա-

1 А. Киракосян, Антиармянская политика Абдул-Гамида в оценке западных авторов (середина 90-х гг. XIX века). - «Молодой научный работник», 1979, N1 с. 3-11. Տե՛ս նաև նույնի՝ «Армянский вопрос на страницах журналов США (середина 90-х гг. XIX века)» - «Вестник» АН Арм. ССР (обществен. наук), 1980, N3, с. 37-48. Տե՛ս նաև նույնի՝ «Армянский вопрос на страницах журналов Великобритании (середина 90-х гг. XIX века)». - Научно-аналитический обзор. АН Арм. ССР. Сектор научной информатики по общественным наукам, Ереван, 1980, 37стр.

2 Библиография литературы по Армянскому вопросу (1890-1900). Научно-информационный бюллетень «Арменоведение за рубежом». Серия III, N9(63). АН Арм.ССР, Центр научной информации по общественным наукам, Ереван, 1983, 31 стр.

3 Геноцид армян 1915г. в зарубежной литературе (1975-1985гг.). Специализированная информация: АН СССР, Институт научной информации по общественным наукам. М., 1985, с.56-61.

4 Армянский вопрос. 1878-1983. (Библиография литературы на русском языке). Научно-информационный бюллетень «Библиография». Серия II, N1(79). АН Арм. ССР. Центр научной информации по общественным наукам, Ереван, 1985, 64 стр.

ցած է չորս մասից: Առաջին մասն ընդգրկում է Հայկական հարցի միջազգայնացումից մինչև Մասունի 1894 թվականի դեպքերը (39 միավոր):

Աշխատությունները հիմնականում վերաբերում են ռուս-թուրքական պատերազմին, ռազմական գործողություններին հայերի մասնակցությանը, Հայկական հարցին և Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության վարած հակահայկական քաղաքականությանը: Երկրորդ բաժինը (1894-1914թթ.) վերաբերում է 1894-1896 թվականների հայկական կոտորածներին, Հայկական հարցի վերաբացմանը, մայիսյան ռեֆորմներին (93 միավոր): Այս շրջափուլի գրականության մեջ մասնավորապես նկատելի են այն աշխատությունները, որոնցում ռուս առաջավոր հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչներն իրենց համակրանքն են արտահայտում հայ ժողովրդի ազատագրական պայքարի նկատմամբ: Քիչ չեն նաև այն ուսումնասիրությունները, որոնց հեղինակները ոչ միայն դատապարտում են մեծ տերությունների երկդիմի վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ, այլև քննադատում են սեփական կառավարության դիրքորոշումը և հաճախ՝ անտարբերությունը XIX դարի վերջերի հայկական կոտորածների նկատմամբ: Երրորդ մասն ընդգրկում է 1914-1920 թթ. պատմությանը վերաբերող գրականությունը (353 միավոր): Այս շրջափուլում են կատարվել հայ ժողովրդի պատմության ճակատագրական իրադարձությունները՝ Յեղասպանություն, Մփյուռքի կազմավորում, հայկական պետականության վերականգնում և այլն: Պատահական չէ, որ այս բաժնի գրականությունը կազմում է մատենագիտական ցանկի հիմնական մասը: Չորրորդ բաժնում (1920-1983թթ.) ներկայացվել են ԽՍՀՄ-ում լույս տեսած բոլոր այն ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են Հայկական հարցին ու ցեղասպանությանը (260 միավոր):

Կատարվել է հսկայական ու շնորհակալ աշխատանք, որը, սակայն, ինչպես ճիշտ ակնարկում է հեղինակը, չէր կարող զերծ չլինել առանձին վրիպումներից, սխալներից և անճշտություններից: Վրիպումները, հատկապես, նկատելի են առաջին-երկրորդ բաժիններում, որոնցում տեղ չեն գտել մեզ հետաքրքրող պորբլեմներին վերաբերող առանցքային մի շարք ուսումնասիրություններ:

Ակներև է, որ խնդրո առարկա հիմնահարցերը սերտորեն աղերսվում են Թուրքիայի պատմության հետ և, բնականաբար, հասնապատասխան շատ ուսումնասիրություններ տեղ են գտել նաև Թուրքիայի պատմությանը նվիրված ռուսերեն մատենագիտությունների էջերում: Պետք է նշել, որ նմանատիպ մատենագիտություններից մի քանիսը մեծապես

օգտակար են եղել մեզ՝ համեմատություններ ու ճշգրտումներ կատարելու համար: Այդ մատենագիտությունների հիմնական թերությունը կայանում է նրանում, որ հաճախ, եթե ուսումնասիրությունների խորագրերում բացակայում է «Թուրքիա» սառնանշումը, ապա պարզ, որպես կանոն, չեն հիշատակվում ցանկերում: Մինչդեռ, ինչպես հայտնի է, Հայկական հարցին նվիրված շատ ուսումնասիրություններ, հատկապես պարբերական մամուլում տպագրվածները, լույս են տեսել առանց այդ ցուցումի:

Թուրքական մամուլի՝ մեզ հետաքրքրող հայկական նյութերի վերլուծության կամ թարգմանության ուղղությամբ զգալի աշխատանք է կատարել Հայաստանի ԳԱԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը, որը «Հայագիտությունը արտասահմանում», «Հայկական հարցը» և այլ մատենաշարերով հաճախ հրատարակել է նաև մատենագիտական ցանկեր: Սրանք կարող են նախապայման ծառայել Հայկական հարցի թուրքական նյութերի մատենագիտությունը պատրաստելու ժամանակ: Հայկական հարցի և ցեղասպանության պորբլեմներին, ինչպես նշեցինք, անդրադարձել են, և ոչ հպանցիկորեն, նաև բուրք պատմաբանները: Հիմնահարցերի թուրքական խեղաթյուրումների ու հակապատմական վերլուծումների վերաբերյալ շատ է գրվել<sup>2</sup>, լույս են տեսել նաև բազմաթիվ գրախոսականներ, որոնցից մի քանիսը տեղ են գտել սույն մատենագիտական ցանկում: Կատարվել են նաև փորձեր՝ կազմելու Հայկական Տասնհինգի վերաբերյալ թուրքերեն-

1 Տե՛ս Ա.Կ.Сверчевская, Т.П.Черман, Библиография Турции (1713-1917), М., 1961, 267 стр. Նաև նույն հեղինակների §Библиография Турции (1917-1958): М., 1958, 190 стр. Նաև նույն հեղինակների §Библиография Турции. Литература на русском языке (1917-1975гг.): М., 1982, 744 стр. Տե՛ս նաև Ж.С.Мусаэлян, Библиография по курдоведению, М., 1963, 184 стр. Н.И. Бостанчиан, Библиография Турции (История), Тбилиси, 1971, 291 стр. և այլն:

2 Մասնավորապես իրևի Ե.Կ.Տարկեսյան, Բ.Գ.Տառյան, Фальсификация истории армянского народа нового времени в турецкой историографии, Ереван, 1963. Տե՛ս նաև նույն գրքի անգլերեն թարգմանությունը՝ Western Town, 1965. Տե՛ս նաև «Հայ թուրքագիրության պարմությունից» հոդվածաշարը (հեղինակներ՝ Ե.Ղ.Սարգսյան, Բ.Գ.Սահակյան և Բ.Պ.Կոնրակյան) հերկոյալ իրադարձություններում «Страны и народы Ближнего и Среднего Востока», т. X. Турция, Ереван, 1979, с.241-327. Т. XII, Турция, Ереван, 1985, с.248-274.

նով կան թուրք պատմաբանների կողմից այլ լեզուներով գրված ուսումնասիրությունների մատենագիտություններ: Այդպիսի փորձերից առաջինը պատկանում է թուրք ճանաչված պատմաբան Թյուրքքայա Աթաթյուկին<sup>1</sup>: Չանց առնելով այս և նմանատիպ այլ գործեր, կցանկանայինք կանգ առնել վերջին գործերից մեկի վրա: Գնահատելի է մասնավորապես Հայկական Տասնհինգի լավագույն գիտակներից Լևոն Վարդանի կատարած լայնածավալ և հիմնարար աշխատանքը, որը կրում է «Հայկական Տասնհինգը թուրքական մատենագիտության մեջ» խորագիրը<sup>2</sup>: Սույն աշխատանքը մատենագիտական սովորական ցանկ չէ: Այն լուրջ, գիտահետազոտական ուսումնասիրություն է, որտեղ մանրամասն տրվում է Հայոց ցեղասպանության մատենագիտությունների ստեղծման պատմությունը: Այստեղ հեղինակը, մեկ առ մեկ, անդրադառնում է իրեն հայտնի նախորդող բոլոր փորձերին և արժեքավորում դրանք: Այնուհետև ներկայացնում է Հայկական Տասնհինգի թուրքական մեկնաբանությունների մի ցանկ՝ բաղկացած 454 միավոր ուսումնասիրություններից: Աշխատանքը տրոհված է հինգ ժամանակաշրջանների՝ 1) 1909-1915, 2) 1916-1922, 3) 1925-1945, 4) 1947-1955, 5) 50-ական թվականների կեսերից մինչև մեր օրերը: Վերջին՝ 5-րդ ժամանակաշրջանն էլ բաժանված է առանձին հատվածների, մեկնակետ ունենալով Հայկական Տասնհինգի հիսնամյակը, վաթսունամյակը, յոթանասունամյակը և ութսունամյակը: Հայտնի է, որ հերթական կլոր տարեդարձների ոգեկոչման շրջանում է, որ թուրքական իրականության մեջ, հատկապես աշխուժանում է հակահայ քարոզչությունը: Այսպես, միայն 1985-1994 թվականների ընթացքում Թուրքիայում լույս են տեսել ավելի քան 140 անուն ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, հուշագրություններ և այլն՝ նվիրված հայկական իրադարձություններին: Հեղինակը խստովանում է, որ նշված թիվը դեռևս ամբողջական չէ, քանզի բազմաթիվ են նաև այլ հրատարակություններ, որոնց ինքը «բախտն ու առիթը» չի ունեցել հանդիպելու: Դա է պատճառը, որ թեև կատարված մանրամասն աշխատանքին, նա համոզված է, որ սույն մատենագիտությունը «թուրք հրատարակություններեն կազմված ոչ ամբողջական մի ցանկ է»<sup>3</sup>: Այնուհանդերձ, տասը տարվա ընթացքում 140 միավոր հրատարակու-

<sup>1</sup> *Türkkaya Atadın. Ermeni Sorunu. Bibliografya. Ankara. 1981. Սույն փաստը վերցրել էր Լևոն Վարդանի ուսումնասիրությունից (տե՛ս նշվ. աշխ., էջ 350):*  
<sup>2</sup> Տե՛ս «Հայկական հայագիտական հանդես», հատ. ԺԵ. Բիշրուք. 1995. էջ 301-374:  
<sup>3</sup> Անդ. էջ 360:

բյուրները բավականին զգալի թիվ են, դա ավելի է, քան նույն ժամանակահատվածում անգլիական, ֆրանսիական, տուսական և անգամ հայկական հրատարակությունների թիվը: Հանգամանք, որը պետք է անպայման մտորումների տեղիք տա:

Շարունակելով աշխատանքը սույն բնագավառում, Լևոն Վարդանը շուտով հրապարակում է թուրքական նյութերի համապատասխան տեղեկատվությունն ամփոփող մի ծանրակշիռ հատոր<sup>1</sup>: Մատենագիտական սույն նշանակալից աշխատանքը բաղկացած է երեք բաժիններից: Առաջին բաժինը, ըստ էության, կրկնությունն է՝ որոշ լրացումներով, «Հայկական հայագիտական հանդեսում» լույս տեսած, մեզ արդեն ծանոթ, մատենագիտության: Նորությունը, և մեզ խիստ հետաքրքրող նյութը, աշխատանքի երկրորդ բաժինն է՝ «Հայկական Տասնհինգը թուրք մամուլին մեջ»: Աշխատանքի երրորդ բաժինը, որ կրում է «Հայկական Տասնհինգին փաստարկումը և մենք» խորագիրը, նվիրված է տվյալ հարցերին աղերսվող թուրք պատմաբանների աշխատությունների մասնագիտական վերլուծությանը, տրված է ձեռք բերված արդյունքների ընդհանուր արժեքավորումը: Այս գրքում ներկայացվում է 1909-1995թթ. ընթացքում Հայկական հարցին և հայերի ցեղասպանությանը վերաբերող թուրք հեղինակների կողմից գրված 639 գրքերի, ժողովածուների և հուշագրությունների ցանկը: Եթե 1905-1915թթ. ընթացքում լույս են տեսել 20, ապա 1915-1923թթ.՝ 74, 1924-1946թթ.՝ 60, 1946-1955թթ.՝ 29, 1956-1965թթ.՝ 60, 1966-1975թթ.՝ 88, 1976-1985թթ.՝ 168 (ընդ որում, այս քանակությունից 126-ը լույս են տեսել 1982-1985թթ. ընթացքում) և վերջապես 1986-1995թթ.՝ 140 գիրք: 639-ը գրքերից 33-ը լույս են տեսել արաբատար օսանդերներով, 450-ը՝ արդի թուրքերենով, 77-ը՝ անգլերեն, 57-ը՝ ֆրանսերեն, 12-ը՝ գերմաներեն, 4-ը՝ իսպաներեն, 3-ը՝ հայերեն, մեկական՝ արաբերեն, պարսկերեն և ռուսերեն լեզուներով: Չնայած այս պատկանելի քանակությանը (639 միավոր), Լևոն Վարդանը ենթադրում է, որ իրականում թուրքական մատենագիտությունը կարող է ավելի ընդարձակ լինել և կարող է առաջիկա նոր պլայտումների:

Հեղինակն, ինքնին, կարևորել է թուրքական նյութերի դասակարգումը և փորձ է կատարել նաև անդրադառնալ մամուլի հրապարակումներին: Բնականաբար, Բեյրութի պայսաններում անհնարին կլիներ նման

<sup>1</sup> Լևոն Վարդան. *Հայկական Տասնհինգը թուրք մատենագիտության և մամուլին մեջ և մեկը*. Բիշրուք. 1998. 258 էջ:

մի աշխատանքի լիակատար կազմակերպումը, ուստի նա բավարարվել է իրեն հասու ընդամենը 35 անուն թուրքական թերթերի մշակմամբ և կազմել պրանցից վերցրած համապատասխան նյութերի մատենագիտական ցանկը (326 միավոր): Նշելի է, որ նյութերը լույս են տեսել գերագանցապես 1965-1995 թվականներին, ընդ որում, միայն 1990-1995թթ. տպագրվել է 131 հոդված: Նկատի ունենալով, որ նույն ժամանակաշրջանում Թուրքիայում լույս տեսած թերթերի ու ամսագրերի քանակը ոչ թե 35 միավոր է, այլ՝ երկի հարյուրավատիկ և ավելի, որե՛մն, թուրքական մամուլի հայկական նյութերն էլ կարելի է բազմապատկել հարյուրով: Ընդ որում, միայն նշված երեսնամյակի համար: Իսկ նախորդ և հետագա տարիների մամուլի նյութե՞րը:

Չնայած Լևոն Վարդանի կատարած մեծ ու շնորհակալ աշխատանքին, այնուհանդերձ, ինչպես ակներև է, այս բնագավառում հսկայական աշխատանք կա կատարելու, որին և հայ պատմաբանները պետք է ձեռնամուխ լինեն անհապաղ: Թուրքական պատմագիտության մերժումի, ուրացումի և կեղծիքի միտումներն արտահայտող այդ նյութերի դասակարգումը և մշակումը ինքնըստինքյան կարող է պարզաբանել այն հսկայական անսթղո հետաքրքրության ակունքները, որ դրսևորում են թուրք պատմաբաններն ու հրավարակախոսները հարցերի նկատմամբ:

Հայկական հարցի և Հայաստանի մատենագիտություններ ստեղծելու անկատար փորձերից են նաև Ռուբեն Աղայանի գույգ գրքերը<sup>1</sup>: Ինչպես մատնանշում է վերջին գրքի խորագիրը, այն նախատեսված է ուսանողների և ուսուցիչների համար և պետք է ծառայի ուղեցույց՝ տվյալ բեմաներով զբաղվելիս: Առավել ծավալուն և ուժեղացված է Համո Վասիլյանի՝ «Հայկական ցեղասպանություն. մատենագիտական և գրադարանային համապարփակ ուղեցույցը» գործը, որը գերագանցապես նվիրված է Հայկական Տասնհինգի բեմատիկային<sup>2</sup>: Սույն մատենագիտությունը անգլերենով լույս տեսած 380 գրքերից կազմված մի ցանկ է: Այն չի պարունակում ոչ արվիվային նյութեր, և ոչ էլ հոդվածներ: Աշխատանքի նորույթներից կարելի է համարել այն, որ յուրաքանչյուր գրքի դիմաց տրվում է նաև տեղեկանք, թե ԱՄՆ-ի ո՞ր գրադարան-

1 R. Adalian, *Armenian Genocide Recouree Guide*, Washington, D.C., 1988, 56p. Տես նաև նույնի՝ «The Armenian Genocide, 1915-1923», Los Angeles, 1988, 40p.  
2 H.B. Vassilian, *The Armenian Genocide. A comprehensive Bibliography and Library Resource Guide*, Ca: Armenian Reference Books Co. Glendale, 1992, 103p.

նում և ի՞նչ քանակությամբ կարելի է գտնել այդ գրքերից: Մյուս նորությունը խնդր առարկա հիմնահարցերի վերաբերյալ հրատարակված մատենագիտությունների ցանկի առկայությունն է՝:

Հայկական ցեղասպանության և Հայկական հարցի վերաբերյալ նեղ մատենագիտական ցանկեր են հրատարակել Ֆ. Պարոնյանը (79 միավոր)<sup>3</sup>, Վահագն Տատրյանը (96 միավոր)<sup>4</sup> և Վրեժ Ներսեսյանը (60 միավոր)<sup>5</sup>:

Հրատարակված մատենագիտություններից լավագույններից մեկը կարելի է համարել ՀՀ ԳԱԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի հրատարակածը<sup>6</sup>: Մատենագիտությունը կազմել են Ա.Հ. Հարությունյանը և Գ.Բ. Մկրտչյանը: Ժողովածուի շրջանակները, ինչպես ցուցում է խորագիրը, ընդգրկում են 1894-1923թթ. ժամանակահատվածները: Ժողովածուում տեղ են գտել հայերեն (538), ռուսերեն (139) և օտար (454)<sup>6</sup> լեզուներով գրված, ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում լույս տեսած մենագրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, հուշագրություններ, հոդվածներ և հարակից այլ աշխատություններ: Մատենագիտության վերջում ներկայացված են անձնանունների և տեղանունների ցանկեր:

Մեծ եղեռնի 80-ամյակի օրերին՝ Մ.Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, լույս տեսավ ևս մի մատենագիտական ցանկ, որը կազմել էին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և ԳԱԱ ֆունդամենտալ գրադարանի աշխատակիցներ Ռ. Բաբաջանյանը, Ն. Գերոյանը, Մ. Կարապետյանը և Մ. Հովհաննիսյանը<sup>7</sup>: «Խմբագրի կողմից» ազդում նշվում է, որ սույն հա-

1 H.B. Vassilian, p.78-79.

2 *Геноцид армян (К 75-летию геноцида армян)*. Библиографический указатель литературы. Составитель Ф.А. Паронян, Ереван, 1990, 22 стр.

3 V.N. Dadrian, *The role of the special organization in the Armenian Genocide During the First World War*. Oxford. Providence, 1993, 32p.

4 V.N. Nersessian, *Armenia. World Bibliographical series*. Vol. 163. Oxford: Clio Press, 1993. XXXIII-304p. Մեզ հիտարքրող ինդիքները սիռլաված են սույն «Հայկական մատենագիտության» տարրի էջերում:

5 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (1894-1923թթ.). ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 1993, 122 էջ:

6 Բացի անգլերենից, այսուհի տեղ են գրել նաև ֆրանսերեն, գերմաներեն և իտալերեն համապարփակ աշխատություններ:

7 Հայոց 1915-1916թթ. ցեղասպանությունը: Մատենագիտություն. Երևան, 1995, 111 էջ:



մատուցող մատենագիտությունը չի ընդգրկում խնդրին վերաբերող ամբողջ գրականությունը, պարբերական մամուլում տպագրված պատմագիտական ու տեղեկատվական հոդվածները, գրական-գեղարվեստական ստեղծագործությունները և այլն: Մատենագիտությունը բաղկացած է միայն հայերեն (542 միավոր), ռուսերեն (141 միավոր), անգլերեն (203 միավոր) լեզուներով հրատարակված գրականությունից և օգտագործված մատենագիտության ցանկից (10 միավոր), ընդամենը՝ 896 միավոր: Գրականության ցանկը, որն ընդգրկում է 1915-1995 թվականների ընթացքում լույս տեսած աշխատությունները, տրոհված է երկու հասկանալի միջև՝ 1915-1964թթ. և 1965-1995թթ.: Մատենագիտությունը եզրափակվում է հայերեն, ռուսերեն և անգլերեն անձնանունների ցանկով:

Անշուշտ, վերոնշյալով չեն սահմանափակվում Հայկական հարցի և Հայերի ցեղասպանության մատենագիտական ցանկերը: Մենք ներկայացրեցինք ամենախիստ անհամապատասխան Չպետք է անտեսել նաև այն, որ տվյալ հիմնահարցերին նվիրված գրականության յուրաքանչյուր միավոր ևս ունի համապատասխան մատենագիտական ցանկ: Որպես օրինակ ներկայացնենք Ջ.Ս. Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը. XIX դարի 70-ական թթ.» (Երևան, 1978) ու «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը. XIX դարի 80-ական թթ.» (Երևան, 1980) մենագրության մատենագիտական ցանկերը: Առաջինն ընդգրկում է հայերեն 82, ռուսերեն 91 և արևմտաեվրոպական լեզուներով 50, իսկ երկրորդը, համապատասխանաբար՝ 133, 118 և 57 միավոր: Եթե անգամ զանց չառնենք կրկնությունները, ապա գործ ունենք լուրջ, պրոֆեսիոնալ մակարդակով կազմված ցանկի հետ, որը մեծապես օգտակար կարող է լինել ապագա մատենագիտական աշխատանքների համար:

1998թ. «Ազգային հարցի և գեոցիոլի ուսումնասիրման կենտրոնի» նախաձեռնությամբ լույս տեսավ Է.Հ. Բաբայանի և մեր կողմից կազմված ռուսերենով լույս տեսած (1877-1997) գրականության մատենագիտությունը<sup>1</sup>: Այս մատենագիտական աշխատությունում տեղ են գտել ռուսերենով լույս տեսած մենագրություններ, հուշագրություններ, սեղմագրեր, ամսագրային և լրագրային հոդվածներ, փաստաթղթերի

ժողովածուներ, գրախոսություններ և այլն (ընդամենը՝ 2360 միավոր): Հասկանալի պատճառներով, կազմողները չեն կարողացել ընդգրկել ամբողջական նյութը: Հատկապես թերի են մամուլի նյութերը: Ռուսերենով լույս տեսած ոչ բոլոր պարբերականներն են, որ կազմողները հնարավորություն են ունեցել օգտագործել: Խոսքը վերաբերում է ինչպես մինչև 1917թ., այնպես էլ 1917թ. հետո լույս տեսած պարբերականներին: Հայտնի է նաև, որ ռուսերեն հսկայական քանակությամբ պարբերականներ են հրատարակվել արտասահմանում: Առանձնաձև են հատկապես տարագրությունում լույս տեսած հրատարակությունները, որոնք մեծ թվով հոդվածներ են տպագրել մեզ հետաքրքրող հիմնահարցերի վերաբերյալ: Սակայն, հայտնի է նաև, որ Երևանի ոչ մի գրապահոց չունի նման հավաքածուներ: Հետևաբար, ապագա աշխատանքներն այս ուղղությամբ պետք է կազմակերպել մոսկովյան գրադարանների միջոցով:

Նշված մատենագիտությունում տեղ են գտել հրատարակություններ, որոնք անմիջականորեն աղերս չունեն Հայկական հարցի և ցեղասպանության հետ, սակայն, բացահայտում են Օսմանյան կայսրության ազգային քաղաքականության ինչ-ինչ կողմերը, կամ վերաբերում են գաղափարախոսական այնպիսի հոսանքների և ուղղությունների, ինչպիսիք են օսմանիզմը, պանիսլամիզմը, պանթոքսիզմը և այլն: Նման աշխատությունները նշելիս տրվել են նաև համապատասխան այն բաժիններն ու գլուխները, որոնք կարող են օգտակար լինել հետաքրքրող խնդիրների առնչությամբ: Կազմողները նպատակահարմար են համարել մատենագիտական սույն ցանկում զետեղել նաև Հայկական հարցի նոր փուլի (1988 թվականից սկսած) վերաբերյալ հրատարակված գրքեր, ամսագրեր ու լրագրային հոդվածներ. հարակից այլ աշխատություններ, այս թվում և աղբյուրաբանական կամ աղբյուրագնաց հրատարակություններ: Նման դեպքում նյութն առավել ընդգրկում է դառնում և, հետևաբար, ամբողջական պատկերացում տալիս կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ամբողջ նյութը (1877թվականից մինչև 1997 թվականը) կազմողները տրոհել են երկու հատվածների՝

- ա) Գրքեր,
- բ) Հոդվածներ:

Այս եղանակը առավել ընկալելի է դարձրել մատենագիտությունը և տարաբաժանել կատարված աշխատանքները: Մատենագիտության

<sup>1</sup> Армянский вопрос. Геноцид армян. Библиография литературы на русском языке (1877-1997). Составители П.О. Оганесян, Э.А. Бабаян, Ереван, 1998, 316 стр.

վերջում տրվել է հեղինակների, կազմողների, խմբագիրների, գրախոսների, թարգմանիչների, ինչպես նաև հեղինակ չունեցող աշխատությունների այբբենական ցանկը:

Մատենագիտական մի ահռելի աշխատանք է իրենից ներկայացնում Մտեփան և Կարո Պողոսյանների կազմած մատենագիտությունը<sup>1</sup>: Միավորների քանակով այն նախադեպը չունի: Ամբողջ նյութը խմբավորված է երեք բաժիններում՝ հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով հրատարակություններ: Արաբերեն և արաբատառ թուրքերեն գրքերին ու հրատարակումներին տեղ է տրված հայերեն գրականության բաժնում: Այս բաժնում բերված են 4048, օտար լեզուների բաժնում՝ 5225 և ռուսերեն բաժնում՝ 2267 միավոր նյութեր:

Ընդամենը՝ 11.540 միավոր: Իրոք, ահռելի քանակություն է, թեև հեղինակներն իրենք են խոստովանում, որ իրենց կազմած մատենագիտությունը ևս չի «հավակնում բացարձակ համալսարնական, ինչը գործնականում անհնար է»<sup>2</sup>: Նկատի ունենալով այն անհասկանալի ու տարօրինակ սկզբունքը, որ որդեգրել են կազմողները նյութերի միավորները հաշվարկելիս, որի ժամանակ նույն հեղինակից բերված նյութերից համարակալվում է միայն առաջինը, իսկ մյուսները դուրս են մնում ընդհանուր քանակությունից, իրականում միավորների քանակը շատ ավելին է: Օրինակ՝ ցանկում ներկայացված Մ.Գ. Ներսիսյանի 15 աշխատություններից համարակալված է միայն առաջինը, իսկ մնացած 14-ը ոչ: Նույն է նաև մյուս հեղինակների դեպքում: Հետևաբար, սույն ցանկում բերված միավորների քանակը (11.540) առնվազն պետք է ավելացնել 4-5 հազարով:

Թեև կատարված ակնհայտ, տքնաջան և հսկայածավալ աշխատանքին, սույն մատենագիտությունը նշվածներից առավել անկատարն է: Ցանկում ընդգրկված աշխատանքների մի զգալի մասը որևէ հեռավոր աղբյուր անգամ չունի խնդրո առարկա հարցերի հետ: Այն տպավորությունն է ստեղծվում, թե կազմողները, առանց որևէ սկզբունքի, ի մի են հավաքել բոլոր այն հնարավոր գրքերն ու հոդվածները, որոնք վերաբերում են ոչ թե կոնկրետ Հայկական հարցին և ցեղասպանությանը, այլ ընդհանրապես՝ Հայոց պատմությանը: Հակառակ դեպքում, ինչպես՝

1 Սյրեփան Պողոսյան. Կարո Պողոսյան. Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն. հատ. 4: Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մարտնչություն. Երևան, 2000. 434 էջ:  
2 Տես Առաջաբանը:

կարող էին այս ցանկում տեղ գտնել այնպիսի գրքեր, ինչպիսիք են մ.թ.ա. II-I դարերի հույն քերական Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ»՝ երկասիրության՝ հայկական մեկնություններին նվիրված Ն.Ապրնցի աշխատությունը, կամ հայ ժողովրդի հնագույն և վաղ միջնադարյան պատմաչափների վերաբերյալ սկզբնաղբյուրների մի այնպիսի հավաքածու, ինչպիսին է «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիան» և համանման հարյուրավոր այլ աշխատություններ: Նման պայմաններում, տարակուսելի է սույն ցանկում հենց Հայկական հարցին և ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների բացակայությունը, դիցուք վերը նշված՝ 1998թ. լույս տեսած «Հայկական հարց. Հայերի ցեղասպանությունը: Ռուսերեն լեզվով գրականության մատենագիտություն (1877-1997)» գիրքը և այլն: Մակայն, կարծում ենք, այստեղ ամենալուրջ թերացումը անվանացանկի բացակայությունն է, ուր, ըստ էության, անօգտագործելի է դարձնում կատարված աշխատանքը, մանավանդ՝ որդեգրված նման սկզբունքների պայմաններում:

Վերջում կցանկանայինք ներկայացնել տպագրության պատրաստվող մեկ այլ մատենագիտություն, որը կազմել են Ազգային գրադարանի մի խումբ աշխատակիցներ, գրադարանի մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժնի վարիչ Ավագ Հարությունյանի գլխավորությամբ: «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը. հայերեն գրականության մատենագիտություն (1876-1999)» խորագիրը կրող այս աշխատանքը բաղկացած է երկու բաժնից՝

Գրքեր, կազմող՝ Մանիկ Բաբայան (շուրջ 1000 միավոր),

Պարբերականներ (թերթեր և ամսագրեր), կազմողներ՝ Ե.Չերեյլգյան, Լ. Խնչատյան, Ա. Դավթյան (շուրջ 8000 միավոր):

Դժվար է որևէ խոսք ասել դեռևս լույս չտեսած աշխատանքի մասին, սակայն ակներև է, որ սույն մատենագիտությունը կարող է հավակնել ցայսօր լույս տեսածներից լավագույնը լինելուն:

Ինչպես տեսանք, առ այսօր ստեղծվել են մատենագիտական մի շարք ցանկեր, որոնք փորձել են ի մի բերել կատարված աշխատանքները և ողջցույց հանդիսանալ հիմնահարցերով զբաղվող մասնագետներին: Մակայն, սույն ակնարկից նաև հանդավեցինք, որ կատարվածը սոսկ չնչին չափով է ընդգրկում ստեղծված վիթխարի գրականությունը: Համահավաք, ամբողջական, գիտական մատենագիտություն կարելի է ստեղծել ակադեմիական ինստիտուտների հենքի վրա, միայն գիտական լուրջ ու հետևողական վերաբերմունքի պայմաններում, Ազգային գրա-

դարանի, Պետական համալսարանի և շահագրգիռ այլ հիմնարկների, այդ թվում սփյուռքահայ, բոլոր մասնագետներին տվյալ աշխատանքներում ընդգրկելու միջոցով:

Հայկական հարցի և ցեղասպանության լիակատար ու գիտական մատենագիտության ստեղծումը հայ պատմագիտության առաջնահերթ խնդիրներից է: